**ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ**
Մռավյան 1, Երևան 375049, Հայաստանի Հանրապետություն
հեռ.597196

**ՏԵՂԵԿԱԹԵՐԹ 1** (սեպտեմբեր, 1991 թ)

## ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈԼՈՐ ՄԱԹԵՄԱՏԻԿՈՍՆԵՐԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Ձեր առջև է ՀՄՄ տեղեկատու պարբերականի առաջին համարը: Ապագայում նրա էջերում հնարավորին չափով կլուսաբանվի հայկական մաթեմատիկական առօրյան, կտրվեն տեղեկու - թյուններ ՀՄՄ խորհուրդի և գիտական նիստերի, սեմինարների, հրավիրված մասնագետների դասախոսությունների, թեզերի պաշտպանությունների, նոր գրքերի և ամսագրերի, մրցույթների, թափուր տեղերի, նոր նշանակումների մասին, կիրապարակվեն այլ նյութեր: Տեղեկաթերթի հաջողությունը մեծապես պայմանավորված է մեր բոլորի ակտիվ համագործակցությունով:

❀ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ❀ Սույն թվի մայիսի 18-ին Երևանի համալսարանի մեծ դահլիճում կա- յացել է ՀՄՄ հիմնադիր Համաժողովը, որին մասնակցել են շուրջ 200 գիտնականներ: Ող- ջույնի խոսքով մասնակիցներին դիմեցին համալսարանի ռեկտոր պրոֆ. Նորայր Առաքելյանը և հանրապետության վարչապետ պ. Վազգեն Մանուկյանը: Համաժողովը քննարկեց և ընդունեց ՀՄՄ Կանոնադրությունը, ապա ընտրեց ՀՄՄ ղեկավարություն:

ՀՄՄ Նախագահ ընտրվեց պրոֆ. Ալեքսանդր Թալալյանը՝ Երևանի համալսարանի մաթե- մատիկայի ֆակուլտետի դեկան, ՀԳԱ թղթ.անդամ:

ՀՄՄ խորհրդի կազմի մեջ ընտրվեցին պ.պ.

| | | |
|---|---|---|
| Սերգեյ Անտոնյան | Սարգիս Հակոբյան | Կարեն Յաղջյան |
| Սամվել Ապրեսյան | Հրաչիկ Հայրապետյան | Վլադիմիր Յավրյան |
| Նորայր Առաքելյան | Տիգրան Հարությունյան | Բորիս Նահապետյան |
| Վիկտոր Արզումանյան | Ֆելիքս Հարությունյան | Ռոմեն Շահբաղյան |
| Բագրատ Բատիկյան | Հայկ Ղազարյան | Ֆայլո Շամոյան |
| Գեղամ Գևորգյան | Ղազարոս Ղազարյան | Շվայց Սահակյան |
| Սամվել Դալալյան | Վալերի Մարտիրոսյան | Սոկրատ Սիմոնյան |
| Նորայր Ենգիբարյան | Վարդան Մարտիրոսյան | Աշոտ Վաղարշակյան |
| Վանիկ Զաքարյան | Յուրի Մովսիսյան | Վիկտոր Օհանյան |
| Ալեքսանդր Թալալյան | | |

ՀՄՄ Վերստուգիչ հանձնախմբի կազմի մեջ ընտրվեցին պ.պ.

| | | |
|---|---|---|
| Ռաֆիկ Արամյան | Աշոտ Կակոսյան | Երվանդ Մկրտչյան |
| Արթուր Է. Ավետիսյան | Համլետ Մարտիրոսյան | Բորիս Սահակյան |
| Ռոբերտ Դավթյան | | |

*Սույն թվի մայիսի 24-ին կայացավ Խորհրդի առաջին նիստը, որտեղ ընտրվեցին փոխ- նախագահները և Վարչության կազմը, քննարկվեց Միության ապագա գործունեությունը:

ՀՄՄ փոխնախագահներ և Վարչության անդամներ ընտրվեցին պ.պ.

Բորիս Նահապետյան, ֆ.մ.գ.դ., առաջատար գիտ.աշխ.( Մաթ. ինստ.)

Գեղամ Գևորգյան, ֆ.մ.գ.թ., դոցենտ ( Համալսարան),

վարչության անդամներ պ.պ.

| | |
|---|---|
| Վիկտոր Արզումանյան ( քարտուղար) | Վարդան Մարտիրոսյան |
| Նորայր Ենգիբարյան | Ռոմեն Շահբաղյան |
| Հայկ Ղազարյան | Վիկտոր Օհանյան ( ատենապետ) |

*Հուլիսի 10-ին ՀՀ Արդարադատության նախարարությունը գրանցեց **ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ**:

*Սույն թվի հուլիսի 22-ին կայացավ Խորհրդի երկրորդ նիստը, որտեղ քննարկվեցին ՀՄՄ մեջ ընդունվելու դիմումները: Որոշվեց Միության անդամ համարել բոլոր այն անձանց, որոնք դիմել են Համաժողովի ընթացքում, իսկ մյուսներին ընդունել անհատական կարգով: